

թիւն պիտի առնուն՝ երբոր այս յեղափոխութեանց ժամանակները հասնին՝ այն երկիրները որոնք վերջի ատեններս բամբակի մշակութեանը ձեռք զարկին կամ այն աստիճան առաջ տարին, որ անժանօթ էր մինչև այն ատենը. այս յեղափոխութիւնը իրօք բոլոր երկրագրնոյս վրայ շրջան մը պիտի առնու, և ամեն կողմ և ամեն խորշ եթէ մօտ և եթէ հեռու՝ իր տպաւորութիւնը պիտի ձգէ: Առանձնականաց աւերմունքը հասարակաց աւերմունքէն պիտի ծանրանայ: Հնդկաստան և Եգիպտոս չկրցան իրենց գանձը հաստատել եթէ ոչ բարեբաղդ դիպուածովս որ աշխարհքիս շահաւորագոյն առուտուրը իրենց յանձնուեցաւ. թէ որ այս բաղդը վերջանալու ըլլայ, նեղութիւնքն նորանց կը սկսին, և վախճանն յուսահատ: Ոչ ինչ նուազ է նաև Եգիպտոսի և Տաճկաստանի համար: Արգելուլը որ այդ կեղակարծ դիպուածքն չպատահին, 'ի վեր է քան զկարողութիւն մարդոյ. մէկ հատիկ ապաստանարան փրկութեան է 'ի հաշուելուծմանն. և այս եթէ յաջողի, ինչպէս երկար խօսեցանք, գինները կարեւոր պայմանին մէջ մնան: Բարեբաղդաբար այս գործն 'ի բնութեան իրաց է. մարդկային կամքէն անկախ, որ և ոչ կարող էր ստոյգ ապահովութիւն տալ: Գինները արդի պայմանին մէջ մընալով, հասարակաց հաշուելուծումը կրնայ անզգալի ըլլալ. այն է ժամանակ վատարկելով՝ հասարակաց վրայ բաժնել ֆնասուն ծանրութիւնը, և մասնակից ընել եթէ գործածողը, եթէ արդիւնարար տնկագործը, և եթէ միջնորդ վաճառականը:

Ի վախճան բանիցս, առանձնացընելով մեր խօսքն Արևելքի կամ Տաճկաստանի վրայ, ուր մեր ազգայինքն մասամբ տեղաբնակ և մասամբ մօտաբնակ, թէ բախտին և դիպուածոց շնորհած պարգևը բամբակին շահավաճառով լիովին իրենց ձեռքը չմնայ, յոր մեծագործունէութեամբ խրախուսեցան, գոնէ ուրախ կարեմք լինել և վստահ յապագայն, որ երկրագործական արհես-

տին սկսելովը, շատ տեղ հողի կոշտերը փշրեցան և բահերը փայլեցան, և անոնց փայլը ցոլաց մտքերուն վրայ, և յուսամբ թէ ալ չեն խաւարիր:

Նոր հսկայ ծառ մը.

Պրազիլի օրագիրները բուսաբանական նոր հսկայ մը կը ծանուցանեն մեզի, որ կը գերազանցէ ինչուան հիմայ ծանօթ վիթխարի ծառերը: Այս հսկան գտեր է Գերմանացի բնագէտ մը որ երկայն ժամանակէ 'ի վեր կը քննէ Ամազոնայ գետոյն և անոր օժանդակներուն եղերքները: Ռիոյ-Պրանգոյի ափանց բուսարձակութիւնը անհաւատալի կերպով հարուստ է. հոն տեսաւ և այս վիթխարի ծառը, որ բամբակային ըսուած ծառերու ցեղին կը վերաբերի. տարածութեամբ շատ աւելի ընդարձակ է քան զափրիկեան պաօպապը. ճիւղերն այնպիսի կանաչագեղ պսակ մը կը ձևացնեն, որուն տակը տասն հազար հողի կրնան հանգիստ պատսպարիլ, և իր շուքը մէկ ընտանիք մը կերակրելու բաւական եղող դաշտ մը կըրնայ ծածկել: Այս անուանի ծառը խիստ սովորական է Բարձր-Ամազոնի գաւառին մէջ, ուր ընդհանրապէս գետեզերքը կ'աճի. գրեթէ հասարակածին տակ ինկնալով՝ կարգէ դուրս սնունդ և ոյժ կ'առնու:

Թոշոշոշոշ անուամբ մեծամարմին թռչունն ալ կը բնակի ասոր ճիւղերուն մէջ՝ և խիստ բարձր թռուելուն համար՝ չվախնար ոչ Հնդկին նետէն և ոչ հրացանի գնտակէն: